ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 10

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ (Ջրվեժ, Զովք և Ձորաղբյուր բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ (Ջրվեժ, Զովք և Ձորաղբյուր բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին:
2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը Ջրվեժ (Ջրվեժ, Զովք և Ձորաղբյուր բնակավայրերը) համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Կոտայքի մարզպետի համապատասխան որոշմամբ:
3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
4. ՀՀ Կոտայքի մարզպետին և Ջրվեժ (Ջրվեժ, Զովք և Ձորաղբյուր բնակավայրերը) համայնքի ղեկավարին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետերի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «15» «հուլիսի» 2024թ.